# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

# ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «06» ապրիլի 2020թ.

2020թ-ի ապրիլի 6-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 հասցեում գտնվող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գրասենյակում տեղի ունեցավ ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ա. Ասատրյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տեխնկական բաժնի պատասխանատու (հանձնաժողովի նախագահ). |
| Ա. Ալեքյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի ավագ տեխնիկական մասնագետ. |
| Գ. Օհանյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տրանսպորտային միջոցների շահագործման պատասխանատու. |
| Հ. Գուլաբյան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար): |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ասատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Հ. Գուլաբյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահի Ա. Ասատրյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց տվյալ ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության նախահաշվային գինը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | Ծրագրային համակարգի սպասարկման ծառայություններ | 2970000 |

ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 շենք հասցեում, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի ապրիլի 6-ին, ժամը «10:30»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | «Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 2, 2-րդ հարկ | info@helix.am |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան,
- Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

| Չ/հ | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X» | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1* | 1 | X | «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ | 6000000 | 7200000 |

* Վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև.

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Ներկայացված հայտ/եր/ը գնահատել բավարար:
3. Ընտրված մասնակից որոշելու նպատակով՝ բավարար գնահատված մասնակցի հետ վարել գնի նվազեցման շուրջ բանակցություն:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հաշվի առնելով, որ ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցը (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչը) ներկա էր հայտերի բացման նիստին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա. պարբերություն համաձայն վարվեցին գների նվազեցման շուրջ բանակցություններ: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը մնաց անփոփոխ, որը գերազանցում է տվյալ ծառայության ձեռքբերման համար նախահաշվային գինը:

## 2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/22 ծածկագրով գնման ընթացակարգում ներառված գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ. պարբերության համաձայն որոշվեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Որպես ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ասատրյան ____________

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ալեքյան ____________

Գ. Օհանյան ____________

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գուլաբյան ____________